

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՄԱՄՈՒԼՆԵՐԸ :

Մօտերս Ամերիկայի Միացեալ Նահանգաց Փիլադելֆիա քաղաքին մէջ երկու մամուլ շինուեր են՝ 70 հազար տուարի, որ 379,400 ֆրանք կրնէ. (մէկ տուարը 5 ֆրանք ու 42 հարիւրորդ (սանքիմ) կարծէ) : Այս սարսափելի մամուլները ժամը 60 հազար բերք պիտի տպեն, ու մէկ վայրկենի մէջ տասը հազար բերք : Դեռ այսպիսի մամուլ ոչ տեսնուեր եւ ոչ մտածուեր էր : Ասով կիմացուի քէ Միացեալ Նահանգաց մէջ ընթերցասիրութիւնը ինչ աստիճանի ծաղկած է, որ ժողովրդեան գիրք ու օրագիր հասցընելու համար այսպիսի կարգէ դուրս գործիքներ հնարելու կըստիպուին տպագրիչք :

ՄԱՐԴԱՏԵԱՅ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԿՏԱԿ

Մօտերս կարգէ դուրս մարդուն մէկը Սկովտիա մեուեր ու բոլոր ունեցածը կտակաւ իր շանը բողեր է : Այս հետաքրքրական ու մարդատեաց կտակին մէկ հատուածը դնենք.

« Զմարդիկ կատեմ, եւ երկրիս վրայ շունս միայն կըսիրեմ. վասն զի մարդիկ ինծի շատ չարիք հասուցին, շունս երկու անգամ զիս մահուրնէ ազատեց եւ միշտ հաւատարիմ մնաց բարեկամութեանս : Ուստի կըփափաքիմ որ մահուրնէս ետքը քաղաքին մէջի տունս, ամարանոցս, ու բոլոր ունեցած ստակս շանս ձօնին տրուի : Կտակակատարացս վրայ պարտք կըղենմ որ իմ հաւատարիմ ընկերս Լորտի մը պէս խնամեն, ու հոգան անպակաս : Այս ալ կուգեմ որ օրուան մէջ երեք անգամ կերակուր տան, եւ կերակուրները շատ տեսակ ազնիւ եւ ամենափափուկ պիտի ըլլան. ջանան որ ամենեւին կամացը դէմ բան չընեն, եւ վերջի շունչը տալէն ետքը իմ քովս բաղեն : »

Զենք կարծեր որ այս նոր Տիմոնին բնական ժառանգները ձօնին միայն բողուն այնչափ ստացուածոց վայելմունքը :

Տիմոն, արեւնացի փիլիսոփայ էր, Քրիստոսէ 440 տարի յառաջ ծնած. իր բարեկամներուն ըրած բարեացը փոխարէն ապերախտութիւն գտնելով՝ այնպէս ատելութիւն մը ունեցաւ մարդկանց վրայ, որ Մարդատեաց ըսուեցաւ : Անգամ մը ծառի վրայէն ընկաւ ու ոտքը կոտրեցաւ. եւ որովհետեւ բնաւ մարդու հետ չէր տեսնուեր,

անխնամ անօգնական մեռաւ : Իրմէ ետքը սովորութիւնեղ ած է Սկովտացւոյն նմաններուն Տիմոն կանչել :

ՄԵՏԱՔՍԵՂԻՆԱՅ ՎՐԱՅԷՆ ԲՈՐԲՈՍԻ ԲԻԾԵՐՆ ԸԱՆԵԼՈՒ ԸՆԱՐՔ

Շատ անգամ մետաքսեղէն դիպակները քիչ մը խոնաւ տեղ որ կենան՝ կըբորբոսին ու բիծ բիծ կըլլան՝ եւ զանոնք մաքրելուն կերպը չգիտցողները ներկել տալ կըհարկադրուին : Արդ այնպիսի ատեն պէտք է երկու հազարկրամ¹ ջրոյն մէջ խառնել հարիւր կրամ օշակ կամ անուշադր (ներշատըր), եւ այն բաղադրութեան մէջ բաքխել արատաւորած մետաքսեղէնը. յետոյ հանել, պարզ ջրով ցօղել, չորցընել եւ արդկել (իւրիւլէմէք) :

ԶԱՐԳ ՄԿԱՆՅ

Քիչ մը ջմարած կիր առ, անկանի մը մէջ փշրէ, մէջը նոյնչափ շաքարի փոշի խառնէ, եւ մկանց յաճախած տեղը տարածէ. որովհետեւ շաքար շատ կըսիրեն, հոտն առաձնուն պէս մէկէն կուտեն կըլլափեն : Ստամոքսերնուն հեղուկը կիրին հետ միանալով՝ մեծ բորբոքում մը կըպատճառէ, որով եւ խեղճ մկները կեցած տեղերին անշնչացած կիչեան :

¹ Մէկ հազարկրամնէ 315 տրամ :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵԱՆ :